ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

*Հարգարժան պարոն մարզպետ*

Տեղեկացվում է Ձեզ , որ <<Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան №8 հիմնական դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդը կայացրել է որոշում տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու մասին:

Մրցույթը կկայանա 2020 թվականի մարտի 19 -ին ժամը 15^00-ին :

Կից ներկայացվում են քաղվածք կառավարման խորհրդի 23.01.2020 թ N 7 արձանագրության քաղվածքը և հայտարարության տեքստը:

Առդիր 2 թերթ:

Խորհրդի նախագահ Գ. Հովհաննիսյան

23.01.2020թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ Մ-01451-2020
24 01 2020

<< Վաղարշապատի Գ.Նժդեհի

անվան №8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

կառավարման խորհուրդ

**Քաղվածք**

**<<ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Գ.ՆԺԴԵՀԻ ԱՆՎԱՆ № 8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ >> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2020Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 23 -ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ N 7 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

ՕՐԱԿԱՐԳ.

Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի <<Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան № 8 հիմն. դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու հարցը:

/ Զեկուցող Գ.Հովհաննիսյան /

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի սահմանված դրույթներով դպրոցի կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան № 8 հիմն. դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի համար անցկացնել մրցույթ:
   Մրցույթը նշանակել 2020թ. մարտի 19 –ին ժամը $15^{00}$-ին:
2. Խորհրդի որոշումը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին և ՀՀ Արմավիրի մարզպետին:

**Խորհրդի նախագահ՝ Գ.Հովհաննիսյան**

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան № 8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

*1.ՀՀ քաղաքացիություն,*
*2.բարձրագույն կրթություն,*
*3.ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):*

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝
*1.դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով,*
*2.ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,*
*3.հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,*
*4.տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն երեք օր առաջ),*
*5.հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),*
*6.աշխատանքային գրքույկի պատճենը:*

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են 2020թ. փետրվարի 10-ից մարտի 10-ը ներառյալ, ամեն օր ժամը $10^{00}$-ից մինչև $15^{00}$-ը , բացի շաբաթ , կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից , << Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան № 8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:
Մրցույթը տեղի կունենա 2020 թվականի մարտի 19-ին ժամը$15^{00}$-ին <<Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան №8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում:

Հասցե՝ Արմավիրի մարզ, ք.Էջմիածին Մանուշյան 2/3

Տեղեկությունների համար զանգահարել 093-07-95-70 հեռախոսահամարով